
ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՍՏԵՂԾՄԱՆ ԵՎ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆԱՆ Գ. Ս.

Լինելով արդի քաղաքացիական իրավունքի գիտության ուսումնասիրության առարկա և սուբյեկտ՝ մեր տնտեսական կյանքում և օրենսդրության մեջ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ ՄՊԸ) երևան է եկել համեմատաբար վերջերս և անմիջականորեն կապված է ԽՍՀՄ-ի փլուզման հետևանքով ՀՀ անկախացման և տնտեսության զարգացման նոր ուղի որդեգրելու փաստի հետ: Տնտեսության զարգացման նոր ուղին նշանավորվեց նախկին վարչահրամայական տնտեսությանը բնորոշ արտադրության միջոցների ու գործիքների նկատմամբ հանրային սեփականության ձևից հրաժարվելով և փոխարենը պետական ու մասնավոր սեփականության հիմքի վրա նոր տնտեսական համակարգ ձևավորելով: Այն իր ձևակերպումը ստացավ «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» ՀՀ օրենքում¹, որի 5-րդ հոդվածով, ի թիվս սեփականության այլ ձևերի (պետական, կոլեկտիվ), ամրագրվեց նաև քաղաքացու մասնավոր սեփականության իրավունքը: Հետագա տարիներին ՀՀ-ում իրականացվեցին լայնամասշտաբ սեփականաշնորհում, տնտեսական ու քաղաքական բնագավառներում ժողովրդավարական բնույթի բարեփոխումներ, որոնք, ընդհանուր առմամբ, կատարեցին պատմական առաքելություն. ընդլայնեցին սեփականատերերի տնտեսական բազան և հիմք ստեղծեցին մասնավոր սեփականության ինստիտուտի ծավալման ու շուկայական տնտեսության ձևավորման համար:

Ստեղծելով մասնավոր սեփականությունն ու այդ իրավունքը կրողներին՝ պետությունը ստիպված է մտածել, թե ինչ ձևերով և միջոցներով է իրականացնելու այդ իրավունքի իրացումը հասարակական կյանքում՝ ապահովելով ինչպես սեփականատերերի, այնպես էլ ոչ սեփականատերերի շահերն ու ակնկալիքները և տնտեսության բնականոն գործունեությունը:

Նյութական կամ ոչ նյութական բարիքների ստեղծման ոլորտում կազմակերպարարական այս կամ այն ձևը որոնելու, գտնելու ու կիրառելու շարունակական գործընթացում պետությունները սովորաբար հակված են ընտրելու հետևյալ հայտնի տարբերակներից մեկը՝ 1) իրենց նախկին օրենսդրությամբ նախատեսված, բայց օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառներով չկիրառված կազմակերպարարական ձևերի վերագործարկման տարբերակը², 2) փոխառելու

¹ Տե՛ս «Հայաստանի Հանրապետությունում սեփականության մասին» ՀՀ օրենք, ընդունված է 1990 թ. հոկտեմբերի 31-ին [ՀՀ գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Ե., 1995]:

² Տե՛ս 1923թ. ՀԽՍՀ քաղաքացիական օրենսգիրք, որը թեև նախատեսում էր կազմակերպարարական

արտասահմանյան որևէ պետության կազմակերպատիրավական ձևը (ձևերը) կամ 3) ստեղծելու օտար ու սեփական կազմակերպատիրավական ձևերից կազմված խառնածին մի եղանակ, որն ավելի արդյունավետ կգործի տվյալ երկրի տնտեսության պայմաններում: Մեր հետազոտության օբյեկտը՝ ՄՊԸ-ն, առաջին տարբերակն է և, ի թիվս այլ կազմակերպատիրավական ձևերի, իրավական նորացված երևույթ է, որի վերլուծությունն ու պատմական զարգացման էվոլյուցիան շարադրված են ստորև:

Ինչպես յուրաքանչյուր իրավական երևույթ՝ ՄՊԸ-ն մինչև իր վերջնական ձևավորումն ու կայացումն անցել է երկարատև ուղի: Ուստի երևույթի անմիջական քմբռնումն առանց դրա ստեղծման օբյեկտիվ նախադրյալների և անցած պատմական ուղու ուսումնասիրության ոչ միայն անիմաստ է, այլև անհնար լիովին հասկանալու դրանց էությունն ու բնույթը: Ընդհանուր առմամբ, իրավագետների մեծամասնությունը, որ ուսումնասիրել է իրավաբանական անձի ձևավորման նախապատմությունը, եզրակացրել է, որ տնտեսական գործունեություն իրականացնող կազմակերպությունների ստեղծման առաջին իրական քայլերը կատարվել են հռոմեական իրավունքում: Սա գլխավորապես պայմանավորված է նրանով, որ մասնավոր իրավունքի կամ գույքային հարաբերություններ կարգավորող քաղաքացիական իրավունքի հիմքը հռոմեական իրավունքն է, որը ձևավորվել ու զարգացել է հռոմեական կայսրության գոյության ամբողջ ժամանակաշրջանում՝ սկսած «12 տախտակներից» մինչև բյուզանդական կայսր Հուստինիանոսի կողմից կողիֆիկացված և այդ ժամանակի համար բավականաչափ կատարելագործված օրենքների ժողովածուն ստեղծելը: Հռոմեական իրավունքում իրավական կարգավորում ստացած այլ հարաբերությունների համեմատությամբ առավել մեծ տեսակարար կշիռ ունեին սեփականության, պարտավորական և առևտրային հարաբերությունները: Ընդ որում, «Քննարկվող ժամանակաշրջանում ինչպես Հռոմի նվաճած տարածքների քաղաքային բնակչությունները, այնպես էլ հենց բուն Հռոմի քաղաքացիների զգալի մասը չունեին “juss commercii”, այսինքն՝ առևտրային գործունեությամբ զբաղվելու իրավունք, իրենց նյութական շահերը պաշտպանելու համար լիակատար գույքային իրավունակություն՝ հռոմեական դատարանին դիմելու իրավունքով հանդերձ, իսկ ովքեր ունեին առևտրային գործունեությամբ զբաղվելու իրավունք, չունեին իրենց սեփականության մի մասից հրաժարվելու և այն շրջանառության մեջ դնելու ցանկություն, քանի որ ամեն մի երևույթ այդ ժամանակներում խիստ անձնավորված էր, և սեփականությունը որպես այդպիսին պատկանում էր բացառապես առանձին անհատներին»³: Չնայած դրան, ըստ պատմական տվյալների՝ հռոմեական իրականության մեջ կարգավորվող

մի քանի ձևեր, այդ թվում՝ ՄՊԸ, սակայն տնտեսական և քաղաքական կյանքի հետագա ամբողջատիրացման պայմաններում չկիրառվեց և չզարգացավ:

³ См. и Каминка А. И. Акционерные компании. Юридическое исследование, т. 1, М., 1902, с. 81-86.

հարաբերություններ, այնուամենայնիվ, գոյություն են ունեցել, երբ մարդիկ պայմանագրեր կնքելու միջոցով միավորվել են ընդհանուր նպատակի հասնելու համար և հիմնել են առանձին միություններ, ընկերություններ, ընկերակցություններ (*societas-սոցիալական հանրույթ*)՝ որպես միավորման հատկանիշ ընտրելով սոցիալական դասը կամ զբաղմունքի տեսակը, հասարակական դրությունը և այլ հատկանիշներ իրենց առևտրային գործունեությունն իրականացնելու համար⁴։ Արտադրությունն այդ ժամանակ հիմնականում իրականացվում էր արհեստանոցներում, որտեղ ստրուկների հետ զբաղված էին նաև ազատ արհեստավորներ։ Դրանք, ըստ երևույթին, ոչ մեծ ձեռնարկություններ էին, որտեղ աշխատանքի բաժանում գոյություն չուներ կամ եթե գոյություն էլ ուներ, ապա էական նշանակություն չուներ⁵։

Հասարակության զարգացմանը զուգընթաց՝ հռոմեական իրականության մեջ աստիճանաբար առաջանում են “*societas*”՝ միություններից տարբերվող այլ միավորումներ։ Դրանք կոչվում էին “*societas victigalium*” կամ “*societas publicanorium*”, որոնք հիմնականում հարաբերությունների մեջ էին մտնում պետական գանձարանի հետ։ Սրանք ստեղծման կարգով և գործունեության բնույթով նման էին ժամանակակից բաժնետիրական ընկերություններին և կրում էին վերջիններիս բնորոշ մի շարք հատկանիշներ։ *Societas victigalium* կամ *societas publicanorium*-ների ստեղծման տնտեսական նախադրյալը նվաճված երկրներից հարկերի և տուրքերի գանձման տնտեսական գործառույթի մեջ կապալային համակարգի ներդրումն էր, որը հռոմեացիները փոխ էին առել հելլենիստական պետություններից։ Կապալային համակարգի էությունն այն էր, որ հարկերն ու տուրքերը հավաքելու իրավունքը հանձնվում էր կապալառուների ընկերություններին, որոնք ընկերության անունից պետության գանձարան էին մուծում որոշակի գումարներ, որից հետո այդ գումարները մեծ հավելումով կորգում էին տեղական բնակչությունից⁶։

Իրավաբանական անձի նախատիպ հիշեցնող մյուս սուբյեկտի երևան գալը պայմանավորված էր Հռոմի նվաճողական արտաքին քաղաքականությամբ։ Այդ քաղաքականությունն ուղեկցվում էր հպատակեցված տարածքներում կառավարման որոշակի կարգ սահմանելու գործընթացով. նվաճված պրովինցիան ոչ միայն բռնակցվում էր հռոմեական պետությանը, այլև բաժանվում էր կառավարման տարբեր իրավական ռեժիմներ (արտոնյալ և՛ կախյալ) ունեցող վարչատարածքային միավորների։ Դրանցում ապրող բնակչությունն ուներ քաղաքացիական իրավունքների և գույքային դրության հարաբերական ինքնուրույնություն կամ լիովին գուրկ էր դրանցից։ Իրավունքի սուբյեկտ համարվելու առումով պրովինցիայի կազմի մեջ մտնող քաղաքների ու գյուղական համայնքների իրավական վիճակը

⁴ См. у Новицкий И. Б. Основы римского гражданского права, М., 1972, с. 236-238.

⁵ См. у Уэллс Л. У., Հին Հռոմի պատմություն, Ե., 1951, էջ 215-216:

⁶ Նույն տեղում, էջ 285:

տարբեր էր: Նրանց մեծ մասը դասվում էր կախյալ քաղաքների շարքին, որոնք թեև հարկ էր վճարում պետությանը, սակայն բնակչությանը հռոմեական քաղաքացիություն և տնտեսական ինքնավարություն չէր շնորհվում. համայնքները ենթարկվում էին մարզի կառավարչին և իրավունքի սուբյեկտ չէին: Սրանցից զատ կային ազատ քաղաքներ, որոնցում իրավունքներն ու ազատությունները կարող էին սահմանվել դաշնակցային պայմանագրով, և այս դեպքում նրանք համարվում էին թեև նվաճված, բայց դաշնակից քաղաքներ, որոնց բնակիչներին շնորհվում էր հռոմեական քաղաքացիություն: Այդպիսի քաղաքները կոչվում էին մունիցիպներ, որոնց քաղաքացիներին առանձին դեպքերում իրավունքներ ու ազատություններ շնորհվում էին ոչ թե պայմանագրով, այլ սենատի ընդունած հատուկ օրենքով, որով սահմանվում էին մունիցիպների՝ որպես կոլեկտիվ տնտեսություն վարող սուբյեկտի իրավունքներն ու ազատությունները և նրանց գույքային ու տնտեսական ինքնուրույնության շրջանակները մյուս համայնքների և պետության հետ հարաբերություններում: Այս դեպքում մունիցիպները ստանում էին ոչ միայն ինքնավարություն և տնտեսական գործունեության իրականացման ազատություն, այլև պահպանում էին տեղական նշանակության հարցեր լուծելու սուբյեկտիվ դատաիրավագործություն: Ուստի կարելի է ասել, որ տեղական ինքնակառավարման համակարգի ներդրումաբ Հռոմի պետական կառուցվածքում մունիցիպների առաջացումը դարձավ եթե ոչ իրավական, ապա գոնե փաստական արտահայտություն հռոմեական իրականության մեջ իրավաբանական անձի ճանաչման համար:

Առևտրային ընկերակցությունների զարգացման հաջորդ փուլը միջնադարն է: Արտադրությամբ ու առևտրով զբաղվող ընկերությունների ձևավորումը, որն սկսվել էր դեռևս ստրկատիրության ժամանակաշրջանում և կապված էր աշխատանքի հասարակական մեծ բաժանման հետ, ավելի ևս խորացավ ու զարգացավ միջին դարերում, երբ արհեստագործությունը վերջնականապես անջատվեց երկրագործությունից և աստիճանաբար կենտրոնացավ քաղաքներում: Նախորդ հասարակարգին բնորոշ ստրկատիրական աշխատանքի վրա հիմնված արտադրության հիմքը ֆեոդալիզմի օրոք կազմում էր արդեն արտադրության միջոցների սեփականատեր հանդիսացող մանրարտադրողների աշխատանքը: Դրա շնորհիվ արհեստագործական արտադրությունը և նրա տեխնիկան սկսեցին զարգանալ առանձին ճյուղերով: Մեծապես ավելացավ արհեստագործական արտադրանքի պահանջարկը, զարգացան առևտուրն ու ապրանքա-դրամական շրջանառությունը: Միջնադարյան քաղաքներն աստիճանաբար դարձան արհեստագործական կենտրոններ, որոնք ոչ միայն պահպանեցին ստրկատիրությունից ժառանգած իրենց ինքնավարությունը, այլև ամրապնդելով իրենց ինքնուրույնությունն ու բնակչության

⁷ St' u Макаров С. А., Общество с ограниченной ответственностью как субъект гражданского права. Дисс. канд. юрид. наук., Саратов, 2004, с. 21.

արտոնությունները՝ այն դարձրին իրավական նորմա, որը կոչվում էր «Պայման քաղաքականաց»⁸:

Գյուղական համայնքներում իրենց կենսունակությունը պահպանեցին մանր ապրանքային արտադրությունն ու տնային արդյունաբերությունը, որոնք տնտեսության մեջ (գյուղացիական ընտանիքում) հիմնված էին հումքի վերամշակման վրա: Այդ պայմաններում տնտեսավարման բնական միջավայրը նախ և առաջ ընտանիքն էր: Դրանցում մասնակիցներն ունեին արյունակցական կամ ազգակցական սերտ հարաբերություններ⁹: Քաղաքներում ու համայնքներում ձևավորվեցին ընտանեկան ընկերակցություններ, որոնք գրականության մեջ հայտնի են «*compagnia fraterna, societas fratrum*»¹⁰ անվանումներով: «Ընտանեկան միավորման առևտրային հարաբերությունների կարգավորման աղբյուրը միջնադարյան սովորություններն էին, իսկ քաղաքներում՝ քաղաքապետերի իրավաշնորհ ակտերը»¹¹: Ըստ Գ. Ֆ. Շերշենևիչի՝ «Միջնադարյան լիակատար ընկերակցության ստեղծման հիմքում ընկած է ոչ թե համատեղ ունեցվածք ստեղծելու, այլ արդեն իսկ գոյություն ունեցող ունեցվածքը չբաժանելու ցանկությունը»¹²: Հենց սրանով են բացատրվում միջնադարյան արտադրության և առևտրի պրակտիկայում ձևավորված իրավաբանական անձանց նախատիպերի հատկանիշներն ու իրավաբանական արտահայտման միջոցները: Դա առաջին հերթին շրջանառությունում ընդհանուր անվան տակ հանդես գալն էր, որը ներառում էր ընկերակցության բոլոր անդամների անունները: Ընտանեկան ընկերակցության զարգացման ընթացքում ձևավորվեց ընկերակցության պարտավորություններով մասնակիցների համապարտ պատասխանատվությունը:

Տնտեսության մեջ կատարված արմատական այլևայլ փոփոխությունների պայմաններում ընտանեկան, այսինքն՝ արյունակցական և ազգակցական կապի վրա հիմնված ընկերակցությունը տնտեսության մեջ զգալի դեր չունեցավ: Այդ պատճառով էլ դրանց հետ նաև տնտեսական կյանքում սկսեցին ձևավորվել արտադրական և առևտրային հարաբերությունների վրա հիմնված այնպիսի միավորումներ, որոնք իրենց հատկանիշներով ավելի մոտ էին ժամանակակից իրավաբանական անձանց, քան քննարկման առարկա ստրկատիրական ժամանակաշրջանի նախատիպերը: Դրանց էությունն ու բնույթը, ինչպես նաև կազմակերպական կառուցվածքը բավականաչափ լավ են նկարագրված հայ պատմագիտության մեջ¹³: Կարելի է եզրակացնել, թե դեռևս միջին դարերում որքան բարձր են եղել պետականությունից զուրկ հայ ժողովրդի

⁸ Տե՛ս Մխիթար Գոշ, Դատաստանագիրք, 2-րդ մաս, Ե., 1918, էջ 318-321:

⁹ Տե՛ս Горлов В. А. Правовое положение обществ с ограниченной ответственностью. Дисс. канд. юрид. наук, Екатеринбург, 1998, с. 16-18.

¹⁰ Տե՛ս Бродель Ф. Материальная цивилизация, экономика и капитализм, т. 2, М., 1998, с. 435.

¹¹ Տե՛ս Шершеневич Г. Ф., Курс торгового права, т. 1, СПб., 1908, с. 308.

¹² Նույն տեղում:

¹³ Առաքելյան Բ., Քաղաքները և արհեստները Հայաստանում 9-13-րդ դդ., Ե., 1958, էջ 347:

արտադրակազմակերպչական ունակությունը և արհեստագործական արտադրանքի իրացման մշակույթը: Հայ միջնադարյան իրականության մեջ ձևավորված արհեստագործական կազմակերպությունները գործում էին ինչպես Արևելյան (համքարություններ), այնպես էլ Արևմտյան Հայաստանում (էսնաֆություններն Օսմանյան Թուրքիայում): Համքարությունների մեջ միավորվում էին միևնույն արհեստին տիրապետող վարպետները (արհեստավորներ), ինչպես նաև տվյալ արհեստին տիրապետելու ցանկություն ունեցող անձինք (աշկերտներ): Համքարական կազմակերպությունն ուներ իր ներքին կարգուկանոնը (կանոնադրություն), որը ճշտությամբ պահպանվում էր, իսկ սահմանված կարգուկանոնի խախտման համար կազմակերպության անդամները ենթարկվում էին կարգապահական կամ դրամական պատասխանատվության: Համքարությունն իր անդամների աշխատանքային շահերը պաշտպանում էր պատվիրատուների և երրորդ անձանց հետ հարաբերություններում, ինչպես նաև համքարության ներսում: Այն ուներ իր դրամական միջոցներն ու մշտական գանձարանը (առանձնացված գույք): Դրամական միջոցները ստեղծվում էին արտադրանքի վաճառքից գոյացած շահույթից, գանազան վճարումներից, նվիրատվություններից և տուգանքներից: Համքարությունն ուներ իր վարչությունը, որի անդամներն ընտրվում էին արհեստավորների ընդհանուր ժողովում: Համքարության գլխավոր վարպետը համքարության պետն էր: Նա հավաքում և պետական գանձարան էր մուծում համքարության անդամներից գանձվող հարկը, որոշում դրանց չափը, բողոք էր ներկայացնում իշխանությունների այս կամ այն անարդար որոշման դեմ¹⁴ և այլն: Ավելացնենք, որ արհեստագործական կազմակերպությունների կանոնադրական նորմերում առկա են բարոյաիրավական որոշակի ըմբռնումներ:

Անընդհատ զարգացող արտադրությունն ու առևտուրը պահանջում էին զգալի կապիտալների միավորում: Սակայն մինչև այժմ քննարկված տնտեսակազմակերպական ձևերը այդպիսի հնարավորություն չէին ընձեռում: Մարդիկ հիմնականում ցանկանում էին իրենց կապիտալները ներդնել շրջանառության մեջ՝ պայմանով, որ իրենց պատասխանատվությունը չգերազանցեր ներդրած կապիտալի չափը: Այդ հարցն իր լուծումը գտավ ծովային առևտրում: Այստեղ սկսեցին ներդրվել այնպիսի կապիտալներ, որոնք ստացվում էին բացառապես միավորման ճանապարհով: Իրավաբանական գրականության մեջ գերիշխող է այն կարծիքը, որ ծովային ընկերակցությունները ստեղծվել են XII-XIII դդ.¹⁵: Ծովային ընկերակցությունների ներքին հարաբերությունները կազմում էին վաճառականների և ավանդատուների փոխադարձ իրավունքներն ու պարտականությունները: Այդ հարաբերությունները ստացան կոմանդիտ (վստահություն) անվանումը (*accomanda, commanda, accomandita*): Ընկերակցության այս

¹⁴ Տե՛ս և **Акопян Т. Х.** Историческая география Армении, Е., 1968, с. 406-408.

¹⁵ Տե՛ս և **Бродель Ф.**, նշվ. աշխ., էջ 434, 438:

տեսակը շրջանառությանը մասնակցում էր ընդհանուր ֆիրմային անվան տակ, որը ներառում էր վաճառականի, բայց ոչ երբեք ավանդատուի անունը, քանի որ նրա անվան ներգրավումը կնշանակեր, որ ընկերակցության պարտավորություններով վերջինս կրում է պատասխանատվություն:

Իրավաբանական տեսանկյունից կոմանդիտային ընկերակցությունների գործողությունները, ըստ էության, հետևյալն էին: Հիմնադիրները որպես հիմնական կապիտալ հայտարարում էին նավի գինը՝ նշելով, թե այն քանի մասի է բաժանված: Կապիտալը ներկայացվում էր փողային արժեքով, և դրան համապատասխան ներդրումները ևս կատարվում էին փողի տեսքով: Կառավարումն իրականացնում էր մասնակիցների ընդհանուր ժողովը և նրանց ընտրած կառավարիչը: Որոշումներն ընդունվում էին ձայների մեծամասնությամբ, և մասնակիցների ձայները համապատասխանում էին ընդհանուր կապիտալում իրենց բաժինների թվին: Այստեղ ուշագրավ է այսօրինակ ընկերակցության՝ մեզ համար ամենահետաքրքիր հատկանիշը: Խոսքն ընկերների անձնական պատասխանատվության մասին է: Եթե վաճառականի համար այն միանշանակ գոյություն ուներ, ապա ավանդատուների պատասխանատվությունը սահմանափակվում էր նրանց ներդրումների չափով: Այլ կերպ ասած՝ կոմանդիտային ընկերակցություններում ծագեց նախապես որոշված սահմաններով ավանդատուների պատասխանատվության սահմանափակման սկզբունքը:

Ավելի ուշ ժամանակաշրջանում առևտրի զարգացման հետևանքով պահանջվեցին առավել խոշոր ներդրումներ: Նոր տարածքների բացահայտումն ու անդրատլանտյան առևտուրը մեծ նավերի և հսկայական միջոցների կարիք ունեին: Չնայած առևտրային գործունեության իրականացման համար խոշոր միջոցների ներգրավման նպատակով ավելի շատ ավանդատուներ ներգրավելու հնարավորություններին՝ առկա էր նրանց պատասխանատվության սահմանափակման ակնհայտ անհրաժեշտություն այլևայլ ռիսկերից խուսափելու համար: Նման պայմաններում, որպես դրամական խոշոր միջոցների հայթայթման միջոց, ծագեց բաժնետիրական ընկերությունը: Ըստ Կ. Մարքսի՝ «Աշխարհը մինչև այժմ կմնար առանց երկաթուղային գծերի, եթե հարկ լիներ սպասելու, որ առանձին կապիտալներ հասնեին այնպիսի չափերի, որ հնարավոր լիներ դրանց պատրաստումը, մինչդեռ բաժնետիրական ընկերությունների միջոցով դրանց պատրաստումն իրականացվեց մեկ ակնթարթում»¹⁶: Իրավաբանական գրականության մեջ առավելապես գերիշխում է այն կարծիքը, որ բաժնետիրական ընկերությունները ծագել են XVII-XVIII դդ.¹⁷: Բաժնետիրական ընկերությունը շրջանառությունում հանդես էր գալիս իր ֆիրմային անվան տակ, որը մասնակիցների անունները չէր ներառում (անանուն ընկերություն), քանի որ ֆիրմային անվան մեջ նրանց

¹⁶ Տե՛ս և Маркс К., Энгельс Ф. Сочинения, т. 1, с. 642.

¹⁷ Տե՛ս և Гойхбарг А. Г. Очерки хозяйственного права, М., 1927, с. 93.

անունների ներառումը կենթադրեր ընկերական միավորման պարտավորություններով նրանց անձնական պատասխանատվություն: Բաժնետիրական ընկերության անանուն լինելը հանգեցնում է նրան, որ ընկերության և մասնակիցների միջև բացակայում է ամուր կապը: Ըստ Վ. Վ. Ռոզենբերգի՝ «Բաժնետերերն իրականում մեկուսացված են ընկերության գործունեությունից: Տնտեսական գործառնությունները բաժանված են մասամբ հատուկ ընտրովի մարմինների և մասամբ ընկերության վարձու գործակալների միջև»¹⁸: Այստեղ տեսնում ենք մեզ համար հետաքրքիր ևս մի զարգացում: Նման պայմաններում տնտեսությանն անհրաժեշտ էր ստեղծել միավորման այնպիսի ձև, որն ապահովեր ընկերության և մասնակիցների միջև սերտ կապը, խորացներ մասնակիցների շահագրգռությունն ընկերության գործունեությամբ, և որի պայմաններում հնարավորինս քիչ լինեին դրա կարգավորմանն ուղղված իմպերատիվ նորմերը: Չխորանալով բաժնետիրական ընկերությունների զարգացման վերլուծության մեջ՝ կարելի է ասել, որ բաժնետիրական ընկերության ստեղծման տնտեսական շարժառիթը խոշոր չափի կապիտալի կենտրոնացումն էր, այսինքն՝ ունեցվածքի միավորումը:

Արտադրության և արտադրական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց՝ առաջ եկան տնտեսական նոր պահանջներ, որոնց բավարարման համար օրենսդիրն ուներ հետևյալ ձևերից մեկն ընտրելու հնարավորությունը՝ բացառել առևտրային ընկերակցությունների ստեղծման (գրանցման) հնարավորությունը՝ խնդրի լուծումը թողնելով ընկերակցության պայմանագրի կողմերի հայեցողությանը, նվազեցնել բաժնետիրական ընկերություններին ներկայացվող պահանջները՝ ճանապարհի հարթելով հնարավոր չարաշահումների համար կամ էլ ստեղծել ընկերական միավորման մի նոր ձև: Ակնհայտ է, որ թվարկվածներից առավել հեռանկարային էր միավորման նոր ձև ստեղծելը: Այն հաշվարկված էր մանր ու միջին ձեռնարկությունների համար, որոնց համար տնտեսական ընկերության բաժնետիրական ձևը բավական թանկ էր և մեծածախ: Այդ պատճառով էլ տնտեսական շրջանառության մեջ առաջացավ կազմակերպարարական այնպիսի ձևի ստեղծման պահանջ, որում մասնակիցը պատասխանատվություն կկրեր ոչ թե իր ամբողջ գույքով, այլ իրեն և երրորդ անձանց նախապես հայտնի արժեքի սահմաններով: Առաջինն այդ տեսակի ընկերության ստեղծման անհրաժեշտությանն արձագանքեց Գերմանիան, որտեղ 1892 թ. ընդունվեց ՍՊԸ-ների մասին օրենքը: Իրավաբանական տեսանկյունից ՍՊԸ-ն անվերապահորեն ճանաչվեց որպես իրավաբանական անձ: Հարկավոր էր 20.000 գերմանական մարկի չափով նվազագույն կանոնադրական կապիտալ: Մասնակիցները կարող էին կոմերսանտներ չլինել և ընդհանուր կանոնի համաձայն՝ իրենց ներդրումներից ավելի չափով պատասխանատվություն չէին կրում: Դրա հետ մեկտեղ կա-

¹⁸ См. у Розенберг В. В. Общество с ограниченной ответственностью, СПб., 1912, с. 15.

նոնադրությամբ կարող էր սահմանված լինել ավանդատուների կողմից ավանդների ներդրման լրացուցիչ պարտավորություն: Այսպես, այն դեպքում, երբ մասնակիցն ամբողջությամբ չէր մուծում իր փայավճարը, մյուս մասնակիցները համապարտ պատասխանատվություն էին կրում նրա փայավճարի չվճարած արժեքի սահմաններում: Ըստ գերմանական օրենքի՝ ընկերության մասնակիցների թիվը համապատասխանում էր փայերի թվին՝ որքան մասնակից, այնքան փայ: Ընկերության ընդհանուր կապիտալում ունեցած իր փայաբաժինը մասնակիցը կարող էր օտարել միմիայն նոտարական կարգով և մյուս բոլոր մասնակիցների համաձայնությամբ:

ՄՊԸ-ն մեծ ճանաչում ձեռք բերեց միջազգային տնտեսական մրցակցության շնորհիվ և լայն տարածում ստացավ մի շարք այլ եվրոպական երկրներում: Այն 1906 թ. ամրագրվեց նաև Ավստրիայի օրենսդրությամբ, որը գրեթե ամբողջությամբ համընկնում էր Գերմանիայի օրենքին: Սակայն Ավստրիայի նրա առավել խիստ էր և առավելապես իմպերատիվ բնույթի, որի հետևանքով ՄՊԸ-ն Ավստրիայում այնքան մեծ տարածում չունեցավ, որքան Գերմանիայում:

Անգլիայում նմանատիպ ձևը ամրագրվել է 1913 թ. և կոչվում էր մասնավոր կազմակերպություն (*private company*): Այնուհետև 1926 թ. կազմակերպության այս տեսակն ընդունվեց նաև Ֆրանսիայի օրենսդրությամբ (*société à responsabilité limitée*): 1926 թ. Լիխտենշտեյնի Քաղաքացիական օրենսգրքի 834-րդ հոդվածի համաձայն՝ ֆիզիկական անձը կարող էր ստեղծել այնպիսի կազմակերպություն, որի դեպքում նրա պատասխանատվությունը սահմանափակվում էր իր կատարած ներդրումների չափով¹⁹: Պանամայում 1966 թ. փետրվարի 1-ին ևս ընդունվեց ՄՊԸ-ների մասին օրենք²⁰: ՄՊԸ-ները գերմանական մոդելի նմանությամբ ընդունվեցին մի շարք երկրներում, այդ թվում՝ Ճապոնիայում, Բելգիայում, Իտալիայում, Իսպանիայում, Պորտուգալիայում, Լյուքսեմբուրգում, Հունաստանում և Հունգարիայում: Գրեթե պահպանելով իր սկզբնական տեսքը՝ ՄՊԸ-ն ենթարկվեց ընդամենը մեկ լուրջ փոփոխության, ըստ որի՝ մեկ անձի՝ ֆիզիկական կամ իրավաբանական, ՄՊԸ ստեղծելու հնարավորություն տրվեց: Գերմանիայում այսպիսի դրույթ ամրագրվեց 1980 թ. հուլիսի 4-ի օրենքով²¹, իսկ Ֆրանսիայում՝ 1985 թ. հուլիսի 11-ի օրենքով²²: Մեկ անձի մասնակցությամբ ՄՊԸ-ի գոյությունը հնարավոր դարձավ, երբ արդեն իսկ ստեղծված ընկերությունում միայն մեկ անձ էր մնում:

Ռուսաստանում առևտրային ընկերություններն ու ընկերակցությունները երկար տարիներ օրենսդրորեն կարգավորված չէին: Դա ապրանքադրամական

¹⁹ Տե՛ս Կулагин М. И. Избранные труды, М., 1997, с. 37.

²⁰ Տե՛ս Тибурсио Р. Б. Правовое регулирование акционерных обществ в Панаме. Автореферат дисс. канд. юрид. наук, М., 1997, с. 7.

²¹ Տե՛ս Жамен С. Основы немецкого торгового и хозяйственного права, М., 1995, с. 38.

²² Տե՛ս Лакур Л. Торговое право, М., 1993, с. 111.

հարաբերությունների թույլ զարգացման և դրանից բխող ձեռնարկատիրական գործունեության իրականացման ձևերի գոյության անհրաժեշտության բացակայության արդյունքն էր: Ռուսական կայսրության օրենքների ժողովածուի ստեղծումից հետո ընկերակցություններն ընդգրկվեցին այդ ժողովածուի և առևտրային կանոնադրության մեջ: Քաղաքացիական օրենքների այդ ժողովածուն տալիս էր տնտեսական ընկերությունների և ընկերակցությունների սպառիչ թվարկումը՝ բաժնետիրական ընկերություն, լիակատար ընկերակցություն, արտելային ընկերակցություն և վստահության վրա հիմնված ընկերակցություն: Ինչ վերաբերում է ՄՊԸ-ին, ապա գիտնականները միաձայն բացառում էին դրա գոյության հնարավորությունը ռուսական իրականության մեջ:

Ավելի ուշ՝ ՆԷՊ-ի շրջանում 1922 թ., ՌԽՖՍՀ քաղաքացիական օրենսգիրքը ՄՊԸ-ների կարգավորմանը նվիրեց չորս հոդված՝ 318-321: Օրենսգրքի 318-րդ հոդվածի համաձայն՝ ՄՊԸ էր համարվում այն տնտեսական ընկերակցությունը, որի բոլոր մասնակիցներն ընդհանուր ֆիրմայի անվան տակ զբաղվում էին առևտրով կամ որևէ արհեստով և պատասխանատու էին ընկերակցության պարտավորությունների համար ոչ միայն ընկերակցության մեջ իրենց ունեցած ավանդներով, այլև իրենց անձնական գույքով՝ յուրաքանչյուր ընկերակցի ավանդի բազմապատիկի չափով (օրինակ՝ եռապատիկ, հնգապատիկ, տասնապատիկ), որը հավասար պետք է լիներ բոլոր ընկերակիցների համար: Ինչպես տեսնում ենք, Եվրոպայում գործող ՄՊԸ-ներից խորհրդային ՄՊԸ-ները հիմնականում տարբերվում էին նրանով, որ խորհրդային տարբերակում մասնակիցները պատասխանատվություն էին կրում ոչ միայն իրենց ավանդների արժեքի սահմաններում, այլև իրենց անձնական գույքով՝ յուրաքանչյուր ընկերակցի ավանդի բազմապատիկի չափով: ՄՊԸ-ի կարգավորմանն ուղղված նորմերն առավելապես հրամայական բնույթի էին, կիրառելի էին հատուկ ոլորտներում, որի հետևանքով անցած դարի 20-ական թվականներից դրանք ընդհանրապես դուրս մղվեցին շրջանառությունից: «Ռուսաստանում ՄՊԸ-ների վերաստեղծման առաջին փուլն սկսվեց 1990-ական թթ.: Մակայն առաջին օրենսդրական ակտերը, որոնք կոչված էին կարգավորելու տնտեսական ընկերությունների ստեղծման, գործունեության, քաղաքացիաիրավական պատասխանատվության և այլ հարցերի հետ կապված հարաբերությունները, մի շարք դեպքերում հակասում էին միմյանց»²³:

ՀԽՍՀ 1923 թ. Քաղաքացիական օրենսգիրքը նույնպես ՄՊԸ-ն նախատեսում էր որպես կազմակերպարարական ձև՝ դրա կարգավորմանը նվիրելով չորս հոդված: Մակայն այստեղ ևս կրկնվում էր խորհրդային օրենքի այն պահանջը, որ մասնակիցներն ընկերության պարտավորություններով պատասխանատվություն էին կրում իրենց ավանդների բազմապատիկի չափով: Այլ կերպ ասած՝ ինչպես ռուսական, այնպես էլ հայկական օրենսգրքերը սահմանափակ պատաս-

²³ Տե՛ս **Могилевский С. Д.** Органы управления хозяйственных обществ. Дисс. док. юрид. наук, М., 2002, с. 77.

խանատվություն ասելով հասկանում էին լրացուցիչ պատասխանատվություն: Անկախ պարտքի մեծության չափից՝ մասնակիցներն ընկերության պարտավորություններով կրում էին բոլորի համար միատեսակ սահմանված՝ իրենց ավանդների բազմապատիկի չափով պատասխանատվություն: Ռուսաստանում և Հայաստանում ՄՊԸ-ները զարգացում չստացան և որպես կազմակերպիչական ձև դադարեցին գոյություն ունենալ, ինչը պայմանավորված էր նրանով, որ թեև նոր տնտեսական քաղաքականության (ՆԷՊ) անցման տարիներին ստեղծվեցին բազմաթիվ ՄՊԸ-ներ, սակայն, ընդհանուր առմամբ, աշխարհում առաջին սոցիալիստական երկիրը մերժում էր մասնավոր սեփականությունը՝ այն համարելով մարդու կողմից մարդուն շահագործելու միջոց:

ՀՀ-ում տնտեսական ընկերությունների, մասնավորապես ՄՊԸ-ի օրենսդրական ամրագրման առաջին փուլն սկսվեց 1990-ական թվականներից: Դա ՀՀ Գերագույն խորհրդի՝ 1992 թ. փետրվարի 12-ին ընդունած «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» օրենքն էր²⁴: Այդ օրենքի 21-րդ հոդվածի համաձայն՝ ՄՊԸ-ի հիմնադիրները պետք է լինեին առնվազն երկուսը: Բսկ ՄՊԸ-ն մեկ անձի կողմից ստեղծվելու դրույթն ամրագրվեց 1998 թ. ՀՀ քաղաքացիական օրենսգրքի²⁵ ընդունումով: Ներկայումս ՄՊԸ-ների կազմակերպման, գործունեության և գործունեության դադարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են Օրենսգրքով և «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքով²⁶: ՄՊԸ-ի ստեղծման և զարգացման ուսումնասիրությունը բերում է այն ընդհանուր եզրակացության, որ ընկերական միավորումները ռեսուրսների կենտրոնացման ու ջանքերի միավորման անհրաժեշտության հետևանքով ամենուրեք լայն տարածում էին ստացել, որոնց իրավական կարգավորման միջոցը միավորման մասին պայմանագիրն էր: Քանի որ միավորման տարբեր տեսակները շրջանառության մեջ ներդնում էին որոշակի կապիտալ, տնտեսական ընկերություններին և ընկերակցություններին իրավաբանական անձի կարգավիճակ տալը դարձավ անխուսափելի: Հետագայում ապրանքադրամական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց, անհրաժեշտ դարձավ ստեղծել այնպիսի առևտրային կազմակերպություն, որը հնարավորություն տվեց առավել ճկուն և լայնածավալ դարձնելու անձանց մասնակցությունը քաղաքացիական շրջանառությանը: Գոյություն ունեցող տնտեսական պահանջների շրջանակներում

²⁴ Տե՛ս «Ձեռնարկությունների և ձեռնարկատիրական գործունեության մասին» ՀՀ օրենք, ընդունված է 1992 թ. փետրվարի 12-ին [ՀՀ գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995 թթ.), Ե., 1995]:

²⁵ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգրք, Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 1998/17 (50), 10.08.1998:

²⁶ Տե՛ս «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենք [Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2010/38 (170), 07.12.2001]:

վերջնականապես ձևավորվեց միավորման պարտավորություններով մասնակիցների պատասխանատվության սահմանափակման սկզբունքը:

Տնտեսական իմաստով ՄՊԸ-ի ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված էր նրանով, որ մարդիկ տնտեսական ընկերության կազմակերպարարական այնպիսի ձևի կարիք ունեին, որն ապահովեր նրանց, ինչպես նաև նրանց ու կազմակերպության միջև առավել սերտ հարաբերություններ: Հատկանշական է նաև, որ առևտրային ընկերության քննվող տեսակում ներքին պարտավորական հարաբերություններն առավել ձկուն են: Դա բացատրվում է այդ հարաբերությունների կարգավորմանն ուղղված նորմերի դիսպոզիտիվությամբ և միաժամանակ հիմնադիր փաստաթղթի՝ մասնակիցների միջև հարաբերությունների կարգավորման համար ունեցած մեծ նշանակությամբ:

Տնտեսական ընկերության կազմակերպարարական այս ձևը տրվեց ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու ռիսկը նվազեցնելու և նույնիսկ վերացնելու հնարավորություն: ՄՊԸ-ն խթան հանդիսացավ մանր ու միջին առևտրի զարգացմանը և որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ՝ գրեթե միանգամից լայն տարածում ստացավ մի շարք երկրներում:

О СОЗДАНИИ И ЗАКОНОДАТЕЛЬНОМ ЗАКРЕПЛЕНИИ ОБЩЕСТВ С ОГРАНИЧЕННОЙ ОТВЕТСТВЕННОСТЬЮ

АРУТЮНЯН Г. С.

Резюме

Изучение истории создания и развития обществ с ограниченной ответственностью (ООО) явствует о том, что их возникновение было обусловлено необходимостью централизации денежных ресурсов товарищеских объединений. Поскольку эти объединения вкладывали в оборот определенный капитал, то возникла необходимость предоставления им юридического статуса. В дальнейшем в связи с развитием товарно-денежных отношений была создана такая экономическая организация, которая давала возможность различным лицам гораздо активнее участвовать в гражданском обороте, тем самым в рамках существующих экономических требований сформировался принцип ограничения ответственности членов ООО.